ԲԱՂՄԱԾՆԵՐ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինոդը՝ լսելով Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրանոցի Հոգաբարձութեան նախագահի այս տարուայ օգոստոսի 22-ի թ. 725 յայտարարութիւնը, որով մատուցանում է Դպրանոցի 1915/16 ուս. տ. նախահաշիւն ի հաստատութիւն, որուշեց. հաստատել Ներսիսեան Դպրանոցի 1915/16 ուսումն. տարուայ նախահաշիւը, որով մուտք է սպասւում 139474 ռ. 24 կ. և նոյնքան էլ ելք, յանձնարարելով Հոգաբարձութեան խնայող լինել ծախքերի մէջ, որպէսզի լրացուի Դպրանոցի մայր գրամագլխից ծախսուած 178332 ռուբ. 70 կոպ. գրամագլուխը, համաձայն Սինոդիս նախանցեալ տարուայ նոյեմբեր 27-ի թ. 2749 հրամանի։ 2 սեպտեմբերի, թ. 323։

Սինոդը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի այս տարուայ յունիսի 18-ի, թ. 1718 յայտարարութիւնը—Խորէն Տէր Գրիգորեանին սարկաւագ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Ղարաբաղի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Խնուշինակ գիւղի բնակիչ Խորէն Տէր Գրիգորեանին, և որովհետև Ղարաբաղի թեմում եպիսկոպոս չկայ, պատուիրել Տ. Մատթէոս եպիսկոպոսին ձեռնադրել նրան սարկաւագ Միրիշանլու գիւղի եկեղեցու համար։ Այս մասին հրամանագրել Ղարաբաղի Կոնսիստորիային։ 7 սեպտ., թ. 326։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան այս տարուայ սեպտ. 2-ի թ. 1500 մակագրութիւնը, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան պատուիրել Մայր Աթոռի Գանձապահին Պօղոս Փաշա Նուպարի 30,000 ռուբլուց 26,650 ռ. փոխադրել Թիֆլիզի Ազգային Բիբլիոթեկին, իսկ մնացած 3350 ռ. «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելեանին Զ-րդ կամաւորական խմբի զեկավար մարմնին յանձնելու համար։ 11 սեպտ. թ. 327։

Մինչդը՝ լսելով Սեղրաք Մանդինեանի այս տարուայ օգոստոս 23-ի խնդիրը, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի կալուածների կառավարչին վճարել Սեղրաք Մանդինեանին նրա կենսաթոշակը ըստ առաջնոյն, ամսէ ամիս՝ սոյն տարուայ յուլիսի մէկից։ 18 սեպտ., թ. 336։

Մինչդը՝ լսելով Վրաստանի Կոնսիստորիայի այս տարուայ մայիսի 31-ի թ. 2455 յայտարարութիւնը—Արսէն Թառլամազեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Թիֆլիզի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Ախալքալակի գաւառի Զամբուրա գիւղի բնակիչ Արսէն Թառլամազեանին և առաջադրել թեմի Առաջնորդին ձեռնադրել յիշեալ Թառլամազեանին քահանայ Կարզախ գիւղի վրայ։ Ներկայացրած վկայականները վերադարձնել ընծայացուին Կոնսիստորիայի միջոցով։ 18 սեպտեմբերի, թ. 337։

Մինչդը՝ լսելով Նորին Սրբութեան սեպտեմբերի 17-ի թ. 1547 մակագրութիւնը, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին տալ ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովին գաղթականների գումարից մի հարիւր յիսուն հազար (150000) ռուբլի։ 21 սեպտ., թ. 339։

Մինչդը՝ լսելով Կովկասի Տ. Փոխարքայի այս տարուայ օգոստոսի 14-ի թ. 21280 գրութիւնը—Նովոնիկոլաևսկա գիւղում հայոց աղօթատուն շինելու մասին, որոշեց. ուղարկելով Կովկասի Տ. Փոխարքայի վերոյգրեալ թ. 21280 գրութեան պատճէնը, պատուիրել Երևանի Կոնսիստորիային կարգադրել սկսել Նովոնիկոլաևսկա գիւղի աղօթատան շինութիւնը։ 21 սեպտեմբերի, թ. 341։

Մինչդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ սեպտ. 17-ի թ. 1551 կոնդակը—ի Տէր հանգուցեալ Ղևոնդ եպիսկոպոսի փոխարէն Տ. Անանիա Արքեպիսկոպոսին Մայր Տաճարի լուսարարապետ կարգելու մասին, որոշեց. նախ՝ պատուիրել Մինչդի Տնտեսական Մասին կազմել ցուցակ այն բոլոր իրերի, որ հանգուցեալ Ղևոնդ եպիս-

կոգոսի լուսարարապետութեան օրով տրուել է Մ. Տաճար հանգուցեալ միտրանների գոյքերից և զանազան անձանց նուիրաբերութիւններով երկրորդ՝ հանել Ներքին Դանձարանից Մոսկուա ուղարկուած իրերի ցուցակը և տալ Մինոցի անդամ Տ. Մատթէոս եպիսկոպոսին և Տ. Յակոբ վարդապետին և երրորդ՝ պատուիրել լուսարարապետի օգնական Պրիստակէս վարդապետին յանձնել և նոր կարգուած լուսարարապետ Անանիա արքեպիսկոպոսին ստանալ Մայր Տաճարում եղած զարդերը, անօթեղէնները և ամբողջ սեփականութիւնը՝ ներկայութեամբ Մինոցի անդամներ Տ. Մատթէոս եպիսկոպոսի և Տ. Յակոբ վարդապետի 23 սեպտեմբերի։ թ. 343։

Մինոցը՝ լսելով Վրաստանի Կոնսիստորիայի այս տարուայ մայիսի 16-ի թ. 2173 յայտարարութիւնը—Միքայէլ Համբարեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Վրաստանի հայոց Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունելու Ախալքալակի գաւառի Զամբուրա գիւղացի Միքայէլ Համբարեանին և առաջադրել թեմի Առաջնորդին ձեռնադրել յիշեալ Համբարեանին քահանայ նոյն գաւառի Գիւմուրտէ գիւղի վրայ, ներկայացրած վկայականները վերադարձնել ընծայացուին Կոնսիստորիայի միջոցով։ 28 սեպտեմբերի։ թ. 347։

Մինոցը՝ լսելով Եկատերինոդարի Նահանգական Դատարանի Դատախազի այս տարուայ սեպտեմբ. 16-ի թ. 21496 գրութիւնը—Արմաւիրցի Դանիէլ Ակսենտեանի կտակի մասին, որոշեց. յիշուն ռուբլին մուտք գրել Մինոցի եկամտից մատեանի Մ. Աթոռի բաժնում, իսկ միւս 50 ռուբլին մուտք գրել նոյն մատեանի աւանդի բաժնում, յարմար ժամանակ Երուսաղէմ ուղարկելու համար։ Անկախ դրանից պատուիրել Մ. Աթոռի Լուսարարապետին յիշատակել առաջիկայ պատարագներից մէկի ժամանակ Ակսենտեանի անունը։ 28 սեպտեմբերի։ թ. 348։

Մինոցը՝ լսելով նոր Նախիջևանի և Ռոստովի Կոնսիստորիայի սեպտ. 19-ի թ. 2062 յայտարարութիւնը—

Ղարասուբազարի Աստուածատուր քահանայ Մեղնիկեանին Թէոդոսիա փոխադրելու մասին, որոշեց. ի նկատի ունենալով, որ գործից չէ երևում թէ Թէոդոսիայի համայնքը հետամուտ է եղել ընծայացու գտնելու, այն ինչ Սինօդը կարգադրել է անպատճառ քահանայ ընտրել ընծայացուներից, միւս կողմից ընտրուած քահանայի կըրթական ցենզը չէ համապատասխանում ծխական կանոն. 71 յօդուածին, Ղարասուբազարի համար էլ ձեռնադրուել է իբրև բացառութիւն և շնորհ՝ արուած Ամենայն Հայոց Կաթուղիկոսի կողմից, թեկանել Թէոդոսիայի ծխականների ընտրութիւնը և պատուիրել Կոնսիստորիային անշեղ կատարել Սինօդիս 1913 թ. սեպտեմբերի 30-ի, թ. 2215 հրամանը։ 2 հոկտեմբերի, թ. 354։

Սինօդը՝ լսելով Մ. Աթոռի կալուածոց կառավարչի սեպտեմբերի 25-ի, թ. 125 յայտարարութիւնը—Հայոց Ազգագրական Ընկերութեան Մ. Աթոռին պատկանող տան ապառիկ վարձագրամի մասին, որոշեց. յարգելով պ. Համբարձում Մելիքեանի խնդիրը, պատուիրել կալուածոց կառավարչին չստանալ Ազգագրական Ընկերութեան վրայ մնացած 240 ռուբլի ապառիկը, սակայն այն պայմանով, որ Ընկերութեան Վարչութիւնը եկող տարուայ համար կոտրագրէ պայման ամսական 80 ռ. վճարելու պարտաւորութեամբ, իր վրայ վերցնելով նաև շինութեան մանր նորոգութիւնները։ 7 հոկտեմբերի թ. 357։

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան ամսոյս 7-ի, թ. 1717 մակագրութիւնը, որոշեց. պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան փութով փոխադրել Տփխիս, «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելեանին կամաւորների գումարից 3000 ռուբլի՝ յանձնելու պ. պ. պրոֆ. Միքայէլ Մինասեանին և Պետրոս Տեփոյեանին։ 12 հոկտեմբերի, թ. 362։

Սինօդը՝ լսելով Տփխիսեցի Կարապետ Ասլամազեանի յօգուտ Մ. Աթոռի նուիրած կալուածական գործը, որոշեց. կալուածագիրը պահել Ներքին Գանձարանում և

պատուիրել կալուածոց կառավարչին մտցնել Մայր Աթոռի կալուածների ցուցակի մէջ Ալամդարեանի նուիրած վերոյիշեալ կալուածը և շահագործել ի շարս միւս կալուածների։ 16 հոկտեմբերի, Թ. 370։

Սինոդը՝ լսելով Նոր Նախիջևանի և Բեսսարաբիայի Թեմի Առաջնորդի այս տարուայ սեպտեմբերի 5-ի, Թ. 371 յայտարարութիւնը—Նիկողայոս Բիւրդեանին Պետրոգրադի քահանայ ձեռնադրելու մասին, ՈՐՈՇԵՑ. պատուիրել Բեսսարաբիայի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Ակկերմանցի Նիկողայոս Բիւրդեանին և առաջադրել Թեմի Առաջնորդին ձեռնադրել յիշեալ Բիւրդեանին Պետրոգրադի եկեղեցու երկրորդ քահանայ։ Ներկայացրած վկայականները վերադարձնել ընծայացուին Կոնսիստորիայի միջոցով։ 19 հոկտեմբերի, Թ. 374։

Սինոդը՝ լսելով Կովկասի Տ. Փոխարքայի Դիւանատան այս տարուայ սեպտ. 10-ի, Թ. 23188 գրութիւնը, որով Սինոդին ուղարկում է Գէորգ աղա Մանուկեանի կտակի % %-ի 10480 ռուբլի 10 կոպ. Թ. 538097 փոխանակագիրը, ՈՐՈՇԵՑ. նախ՝ ի նկատի ունենալով, որ Գէորգ աղա Մանուկեանի կտակագումարի 1897 Թ. մնացած տոկոսները՝ 10480 ռ. 10 կոպ. արդէն ստացուած և մուտք են գրուած Մ. Աթոռի մտից մատեան Թ. 640 յօդ., ուստի այս գործը կարճել. երկրորդ՝ Կալկաթայի անգլիական բանկի հաշուեկշիռը (балансъ) դնել Ներքին Գանձատան, ուր պահւում է նաև Գէորգ աղա Մանուկեանի կտակը, երրորդ՝ կտակագումարի յետագայ տարիների տոկոսները գանձելու համար ժամանակին առանձին գործ կազմել և չորրորդ՝ խնդրել Հոգևոր Գործերի Դեպարտամենտին յայտնել Սինոդիս որոշակի, թէ ստացուած 10480 ռուբլի 10 կոպ. ո՞ր թուից մինչև ո՞ր թուի % % են։ 19 հոկտեմբերի, Թ. 375։

Սինոդը՝ լսելով Ներքին Սրբութեան հոկտ. 16-ի, Թ. 1788 մակագրութիւնը, ՈՐՈՇԵՑ. համաձայն Ներքին Սրբութեան մակագրական հրամանի, պատուիրել Մայր Աթոռի

Դանձապահին տալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին գաղթականաց գումարից 150000 ռուբլի։ 23 հոկտեմբերի թ. 381։

Մինչդը՝ լսելով Վեհափառ Հայրապետի հոկտեմբերի 19-ի թ. 1806 կոնդակը—Տ. Տիրայր վարդապետին Հայրապետական Դիւանի Դիւանապետ կարգելու մասին, ուրեշեց. պատուիրել Մ. Աթոռի Դանձապահին տալ նոր նշանակուած Դիւանապետ Տ. Տիրայր վարդապետին այս հոկտեմբեր մէկից ամսական 80 ռուբլի ռոճիկ և քսան ռուբլի անընդհատ, որպիսի ռոճիկ տալ և Տ. Բագրատ եպիսկոպոսին ցնոր տնօրէնութիւն Նորին Սրբութեան։ 23 հոկտեմբերի թ. 382։

Մինչդը՝ լսելով Հոգևոր Գործերի Դեպարտամենտի հոկտ. 6-ի թ. 5800 գրութիւնը, որով թոյլ է տրուում Տփխիսեցի Աւետիք Մանուէլեանի նուիրած հողաբաժինն ընդունել Տփխիսի ս. Կարապետ եկեղեցու օգտին, ուրեշեց. ուղարկելով Հոգևոր Գործերի Դեպարտամենտի թ. 5800 գրութեան պատճէնը և հողամասի կալուածագիրը, պատուիրել Վրաստանի Հայոց Կոնսիստորիային ընդունել հողամասը իբրև սեփականութիւն Տփխիսի ս. Կարապետ եկեղեցու և կարգադրել եկեղեցական–ծխական դպրոց շինել այդ հողամասի վրայ, համաձայն նուիրաբերողի կամքի։ 23 հոկտեմբերի թ. 383։

Մինչդը՝ լսելով օրթոդոքս Ելիզաւետա Գոդոլաձէի խնդիրը—իրեն Հայաստանեայց եկեղեցու ծոցն ընդունելու մասին, ուրեշեց. ի նկատի առնելով, որ քաղաքական իշխանութեան կողմից արգելք չկայ, թոյլ տալ Կոնսիստորիային ընդունել Հայ եկեղեցու ծոցը Դանձակի վերաբնակչուհի պրովոսլաւ Ելիզաւետա Գոդոլաձէին, պատուիրելով այդ մասին տեղեկութիւն տալ Դանձակի Նահանգական Վարչութեան։ 23 հոկտեմբերի, թ. 384։

Մինչդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ մայիսի 28-ի, թ. 2070 յայտարարութիւնը—Իգդիրցի Աստուր Աստոյեանի և Մանիա Սահակեանի շհաս պսակի

թոյլտուութեան մասին, որոնց. թոյլ տալ Մանիայի և Ատատուրի ամուսնութիւնը, որոնց մէջ կայ գլխովին խորթութեան 5-րդ աստիճանի կապակցութիւն. 26 Հոկտեմբերի, թ. 390։

Մինչդէ՝ ի նկատի ունենալով, որ Մ. Աթոռի միաբան Տ. Իսահակ վարդապետը Նորին Սրբութեան կարդադրութեամբ արձակուելով իւր պաշտօնից՝ ներկայումս գտնուում է Մայր Աթոռում, որոնց. պատուիրել Մայր Աթոռի Գանձապահին անցած սեպտեմբերի 15-ից տալ Տ. Իսահակ վարդապետին միաբանական ռոճիկ և անդրադրամ։ 28 Հոկտեմբերի, թ. 391։

Մինչդէ՝ ի նկատի ունենալով, որ իւր փաստաբան պ. Գրիգոր Պետրոսեանի ժամանակը լրացել է այս տարուայ Հոկտեմբերի 1-ին, որոնց. վերանորոգել փաստաբանի հետ կապած պայմանը իր բոլոր մանրամասնութիւններով և այս մի տարի ժամանակով, այսինքն հրաւիրել պ. Պետրոսեանին Մ. Աթոռի փաստաբան մինչև 1916 թ. Հոկտեմբերի մէկը։ Անկախ դորանից ի նկատի ունենալով փաստաբանի արդիւնաւոր և անբասիր պաշտօնավարութիւնը, խնդրել Նորին Սրբութեան բարեհաճ ուշադրութիւնը։ 30 Հոկտեմբերի, թ. 395։